



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՍՈՒՍԱՆԻ ՄԵԶ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ ՍԸ ՏԱԼՈՎ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՆՑՔԱՅՆԱՑՈՒՄՈՎ ՈՒ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ՝ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԸՐ ՊԻՏԻ ԿՈՐՍՆՑՆԵ ԻՐ ԴԻՄԱԳԻԾԸ

ՀԱՍՏԱՏԵՅ ՎԵՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ինչպես նախընթաց հովուապետական այցելութեանց առիթով, այս անգամ եւս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս իր ժամանակացոյցին մէջ տեղ յատկացուցած էր մտաւորական հանդիպումի մը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 14 Յոկտեմբերի կէսօրին, UCLA համալսարանին մէջ, հայրապետական դասխօսութեամբ մը:

Վեհափառ Հայրապետը համալսարան հասաւ կէսօրին եւ առաջին հերթին, պատշաճ հիւրասիրութեան մը արժանացաւ «Պանչ Հոլ» սրահին մէջ: Հիւրասիրութիւնն ու հետեւող դասախօսութիւնը կազմակերպուած էին Միջին Արեւելքի Ուսումնասիրութեան ամպիոնին, Կրօնական Հարցերու Ուսումնասիրութեանց, Պատմութեան, Հայկական ամպիոնին եւ Միջազգային Հարցերու Ուսումնասիրութեանց հիմնարկին համատեղ գործակցութեամբ: Ներկայ էին յիշեալ բաժանմունքներու պատասխանատուներէն՝ Ռէնտըլ Ճանսըն, Ճէքօ Տէյլման, Էն Գարակէօզեան, Ռիչըրտ Յովհաննէսեան եւ Ուիլիըմ Շնատուիւնթ, Թեմիս հոգեւորականաց դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս ժողովականութեան ներկայացուցիչներ եւ այլ հիւրեր:

Ստերմիկ պահ մը բոլորելէ ետք, Վեհափառ Հայրապետն ու ընկերակիցները ուղղուեցան «Պրոտ Հոլ» սրահը, ուր տեղի պիտի ունենար դասախօսութիւնը: Մեծ թիւով ունկնդիրներ, հայ թէ օտար, մեծ մասամբ երիտասարդներ, լեցուցած էին սրահը: Անոնց շարքին էին Ազգ. Ֆերահեան երկրդ. վարժարանի վերին կարգի աշակերտները, ընկերակցութեամբ իրենց ուսուցիչներուն:

Բացման խօսքը արտասանեց Ռէնտըլ Ճանսըն, որ ողջունեց Վեհափառ Հայրապետն ու ներկաները, որոշ տեղեկութիւններ տուաւ կազմակերպիչ բաժանմունքներուն գործունեութեան մասին, ապա հրաւիրեց Փրոֆ. Ռ. Յովհաննէսեանը, որպէսզի ներկաներուն ծանօթութիւն տայ բանախօս հովուապետին մասին:

Յարգելի դասախօսը խօսեցաւ Վեհափառ Հայրապետի ուսումնառութեան ու ծառայական կանքին մասին, նախքան կաթողիկոսական գահ բարձրանալը, յիշեց, թէ կաթողիկոս ընտրուած է 1995ին ու անկէ ետք, անոր ընթացքը կանգ չէ առած: Ան նաեւ յիշատակեց Վեհափառ Հայրապետի միջազգային գործունեութիւնը, յատկապէս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին բարձրագոյն դիրքին վրայ անոր 14 տարիներու ծառայութիւնը, ապա հրաւիրեց Նորին Ս. Օծութիւնը՝ տալու դասախօսութիւնը:

Նիւթն էր «Քրիստոնէութեան ապագան Միջին Արեւելքի մէջ»: Իբրեւ շրջանի անցեալի ու այժմու իրադարձութեանց քաջածանօթ առաջնորդ՝ Վեհափառ Հայրապետը դասախօսութիւնը բացաւ հակիրճ կերպով ներկայացնելով միջին արեւելեան երկիրներու նորագոյն զարգացումները, աշխարհաքաղաքական իրավիճակները եւ ծանօթ դէպքերուն ու զարգացումներուն հետեւանքով գոյացած բարդ իրավիճակը: Նկատել տալով, որ Միջին Արեւելքը երեք միաստուածեան կրօնքներու համատեղ գոյակցութեան միջավայրն է եղած դարերէ ի վեր, ան նշումներ կատարեց միջին արեւելեան երկիրներու պետական դրութիւններուն մասին, ուր կրօնական դասն ու մտածողութիւնը ներկայութիւն են, կրօնքն ու քաղաքական կեանքը փոխադարձաբար ներգործութիւն կ'ունենան իրարու վրայ: Ան հանգամանօրէն խօսեցաւ ժողովրդավարութեան ու քաղաքացիական իրաւունքներու կենսագործման նպատակով տեղի ունեցող շարժումներուն մասին, որոնք իշխանափոխութիւններու պատճառ դարձած են, իրենց անդրադարձը կ'ունենան ժողովուրդներու կեանքին վրայ, ու նոր կացութիւններ ու դրական թէ բացասական գոյներով հորիզոններ կը պարզեն քրիստոնէայ համայնքներուն դիմաց: Վեհափառ Հայրապետը հակիրճ կերպով անդրադարձաւ տարբեր երկիրներու կացութիւններուն, իշխանութեանց ձեւին ու անցեալէն եկող տագնապներուն, հաւանականութիւններուն, շրջանային ու միջազգային գործօններու ազդեցութեան, յիշեցնելով, որ քրիստոնէաներու համար կը թուին ստեղծուիլ այնպիսի պայմաններ, որոնք կրնան փոխփոխութեան ենթարկել դարաւոր վիճակը, պատճառ դառնալ գաղթի ու շրջանի մարդագրական պատկերի փոփոխութեան: Ան շեշտեց, որ երեք կրօնքներու զաւակներուն համար, Միջին Արեւելքը եղած է ու պէտք է մնայ համատեղ գոյութեան, գործակցութեան ու փոխադարձ հանդուրժողութեան հայրենիք, ինչպէս բոլոր փոքրամասնութեանց, նոյնպէս ալ շուրջ 15 միլիոն քրիստոնէաներու ազատութիւններն ու իրաւունքները պէտք է երաշխաւորուին. քրիստոնէաները պէտք չէ մատնուին մեկուսացման ու լուսանցքայնացման, այլ դրապաշտ գործակցութիւն պէտք է ցուցաբերեն ընկերութեան ու պետական դրութեանց բարեփոխման գործընթացին մէջ, հաստատելով դրական գործակիցի իրենց հանգամանքը:

Դիպուկ անդրադարձումներով ու ընդհանրական մօտեցումներով, վերլուծումներով՝ Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ պետական դրութեանց ու կրօնքի միջեւ սահմաններու յստակացման անհրաժեշտութեան, միաժամանակ նկատելով, որ քաղաքական դրութիւնները կարելի չէ բաժնել կրօնական իրականութիւններէն:

Իսլամ, քրիստոնեայ ու հրեական կրօնքերուն միջեւ համերաշխ գործակցութեան հրամայականին կողքին, Վեհափառ Յայրապետը վեր առաւ Նոյնինքն քրիստոնեաներու միջեւ միասնութեան ու գործակցութեան կարեւորութիւնը, միաժամանակ շեշտելով իւրաքանչիւր եկեղեցւոյ սփիւռքեան գաղութներուն ներդրումին կարեւորութիւնը: Ան շեշտեց, որ առանց իր քրիստոնեայ տարրին՝ Միջին Արեւելքը պիտի կորսնցնէ իր իսկական դիմագիծը, հետեւաբար, բոլոր կրօնքներուն միջեւ հանդուրժողութիւնը, փոխադարձ ճանաչումն ու յօգուտ բոլորին գործակցութիւնը անհրաժեշտ են: Վեհափառ Յայրապետը անհրաժեշտ նկատեց նաեւ, որ քրիստոնեաները մասն իրենց դարաւոր բնակավայրին մէջ, շրջանին բաժնեկիցներուն հետ գործակցութեան ճամբով կիրարկուի արդարութիւն, իշխանութեան արդար բաժնեկցութիւն, համաձայն այն սկզբունքներուն, որոնք կը կազմեն երեք միաստուածեան կրօնքներուն եութիւնը:

Եզրափակիչ նշումներուն մէջ, Վեհափառ Յայրապետը անհրաժեշտ նկատեց իրապաշտ մօտեցումը, իբրեւ օրինակ՝ անդրադարձաւ Լիբանանի 17 համայնքներուն միջեւ համակեցութեան տարագին, սակայն նաեւ նշեց, որ իւրաքանչիւր երկիր ունի իր իւրայատկութիւնը: Այս իրողութեանց նկատառումով ու Նոյն Աստուծոյ զաւակները ըլլալու գիտակցութեամբ է որ, ըսաւ Վեհափառը, պէտք է կերտել միասնական կեանք, յարգել ու պահպանել մշակութային առանձնայատկութիւնները, ստեղծել վստահութեան խարիսխ, պահպանել իւրաքանչիւրի արժանապատուութիւնը, ազատութիւնները, հետամուտ ըլլալ արդարութեան ու խաղաղութեան, փոխադարձաբար ըլլալ հանդուրժող:

Այս ու նման մարտահրաւերներ պէտք է երեք կրօնքներու հետեւորդներուն ու անոնց առաջնորդներուն կողմէ դիմագրաւուին լուրջ մօտեցումով, եզրափակեց Վեհափառ Յայրապետը:

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Յայրապետին, այս համապարփակ ու շահեկան դասախօսութեան համար, ապա առիթ տուաւ, որ ներկաներ հարցումներ ուղղէն:

Շրջանին մէջ Թուրքիոյ նպատակներուն ու դերակատարութեան բնոյթին, կրօնատիպ վարչակարգերու դեպի ժողովրդավարութիւն անցքին, իշխանափոխութիւններու եւ շրջանի երկիրներուն մէջ հաւանականութիւններուն մասին հարցումներու՝ Վեհափառ Յայրապետը պատասխանեց ըստ բաւականին սպառիչ կերպով, սակայն նաեւ նշելով, որ չի նախընտրեր գուշակութեան ձեւի նախատեսութիւններ կատարել:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I LECTURES AT UCLA ON "THE FUTURE OF CHRISTIANITY IN THE MIDDLE EAST"

On Friday, October 14, 2011, a capacity crowd gathered at UCLA's Broad Hall to hear a riveting lecture by His Holiness Catholicos Aram I on "The Future of Christianity in the Middle East".

The Pontifical lecture was sponsored by the UCLA Center for Near Eastern Studies, Center for the Study of Religion, Department of History, Armenian Students' Association, and the International Institute.

His Holiness, accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian, arrived on campus at noon where they were welcomed by Vice-Provost of International Studies Randal Johnson, Professor of History Richard Hovannisian, Professor of Near Eastern Languages and Cultures and Director of the Center for the Study of Religion Jacco Dieleman, Past Chair of Academic Senate and Professor of Mechanical and Aerospace Engineering Ann Karagozian, and Chair of the Department of Near Eastern Languages and Cultures William Schniedewind.

The UCLA delegation escorted His Holiness and entourage to Bunche Hall for a reception, during which His Holiness said "the university is at the center of my ministry and I consider myself everlastingly a student, and I encourage action with reflection." Vice-Provost Randal Johnson presented a gift to His Holiness, after which he was escorted to Broad Hall for the lecture.

The event began with the campus welcome by Randal Johnson, who thanked His Holiness for making the time to visit the University and expressed how honored he was that the Pontiff was there to share his thoughts on such an important topic.

Professor Richard Hovannisian in his opening remarks welcomed His Holiness back to UCLA after 11 years, when the Pontiff had presided over what he said was the best conference in recent memory on the issue of Armenian Cilicia. He continued to say that with all that is currently going on in the Middle East, the brave and truthful speech of His Holiness is needed now more than ever. He concluded by stating that "His Holiness has been a leading and trusted voice in the Middle East with respect to both Muslim and inter-Christian dialogues", and after going through the Pontiff's biography, invited him to the podium to present his lecture.

Catholicos Aram I stated that regime change will have a positive impact on the lives of Christians only when democratic states are established and the rights of Christian communities are fully recognized and respected. Otherwise, he continued, "Christians will continue to emigrate."

In the second part of his speech, His Holiness spoke about the challenges faced by the churches in the region. He stated that they must redefine their self-understanding and reassess their witness in this region which is in turmoil and transition because the church is a God-given vocation and not simply an institution.

After sharing his view on the way the churches in the Middle East should respond, Catholicos Aram I concluded: "Christians in the West should not consider the churches of the Middle East as the remnants of Christian history or mission lands, but as genuine partners; they should assist them to remain in the Middle East, in their own lands. Judaism, Christianity, and Islam must assume their prophetic roles at this critical moment of history, and endeavor together to build a culture of life which promotes reconciled diversities and a quality of life sustained by dignity, freedom, justice and peace, as well as by

tolerance and mutual trust. Especially at this time, when the region is oscillating between uncertainty and promise, fear and hope, the three monotheistic religions are called to respond to this challenge.”

A question and answer session followed.